# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Վտանգավոր Բարձրություն ՍՊԸ-ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-24/1-ՍՊՈՐՏ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | |
|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 11 | Trespass,DLX | Trespass,DLX | Բաճկոն լեռնագնացի Լեռնագնացի բաճկոնը նախատեսված է բարձր լեռնային գոտում մինչև - 40 C0 ջերմաստիճանի պայմաններում լեռնագնացի մարմնի ջերմությունը կայուն պահպանելու, կլիմայական բարդ ազդակներից պաշտպանելու և միևնույն ժամանակ շարժունակությունը չսահմանափակելու, լեռնագնացին արտահայտիչ տեսանելի դարձնելու համար: Բաճկոնը պետք է պատրաստված լինի ամբողջությամբ բարձրորակ նյութերից և դետալներից, լեռնագնացային հանդերձանքի միջազգային չափորոշիչներին համապատասխան: Բաճկոնը բազմաշերտ է, տաք, կանգուն բարձր օձիքով, հողմադիմացկուն գլխանոցով, կոճկվում է խոնավադիմացկուն կայծակաճարմանդներով; Ունի հավելյալ կայծակաճարմանդներով փակվող օդանցքներ, որոնք կարգավորում են օդափոխանակությունը և օգնում են հեռացնել քրտինքը, երկար ժամանակ պահպանում են մարմնի չորությունը: Պատրաստված է DLX թաղանթային (մեմբրանային 20k/10k) տեխնոլոգիայի կիրառմամբ՝ շնչող է, ջրակայուն և հողմակայուն, ունի անջրաթափանց կարեր: Կայծակաճարմանդով |

| | | | |
|---|---|---|---|
| | | | գլխանոցը պետք է ունենա գլխի 3 տարբեր պարամետրերի չափսերի կարգավորման համակարգ, ինչպես նաև, բաճկոնից առանձնանալու հնարավորություն: Բաճկոնի ստորին հատվածում պետք է առկա լինի 2 հատ մարմնի չափսերի համապատասխանեցման, կարգավորման համակարգեր, 2 հատ ջրակայուն կրծքավանդակի գրպաններ, առնվազն 2 հատ արտաքին ստորին գրպաններ՝ որոնք փակվում են հատուկ կայծակաճարմանդներով, թևքերի չափսը ինքնակպչուններով կարգավորվող: Բաճկոնը պետք է ունենա՝ առնվազն մեկ հատ փակվող ծոցագրպան, թևերի տակի հատվածներում օդափոխման կայծակաճարմանդներ: Գրպաններից առնվազն մեկը մեծ չափսերի է, նախատեսված է ձեռնոցների համար: Ցանկալի է ներքին ձյունապաշտպան կիսաշրջազգեստի առկայությունը և թիկունքամասում, նստատեղի հատվածի երկարացված տարբերակը: Ընդունելի է՝ մուգ մոխրագույն, սև, կապույտ, վարդագույն և կարմիր գունավորումները: Չափսերը՝ 46-ից 64, կամ SL-4XL : Բաճկոնի արտաքին շերտի՝ առնվազն եռաշերտ գոռտեքս (GORE-TEX) մեմբրանայի, պահանջվող տեխնիկական ցուցանիշներն են՝ Անջրանցիկության ցուցանիշ՝ 20.000 մմ Շնչելիության ցուցանիշ՝ 10.000-20.000 mvp (MVTR) ( 1 g/m2/24hour ) Արտաքին գործվածք՝ 100% պոլիէսթեր, 40D-80D (Denier) և TPU DLX մեմբրան, Աստառ՝ 100% պոլիէսթեր: Մատակարար կազմակերպությունը պարտավոր է մատակարարման փաստաթղթերի հետ միասին ներկայացնել լեռնագնացային բաճկոնի համապատասխանության սերտիֆիկատ, տրված Հայաստանի Հանրապետությունում արտոնագրված լեռնագնացային կազմակերպության կողմից : Փաթեթավորումն ու պիտակավորումը՝ գործարանային: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Втангавор Барцрутюн в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-24/1-ՍՊՈՐՏ ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | |
|---|---|---|---|
| | фирменное наименование | наименование производителя | технические характеристики |
| 11 | | | |